



ԱՐՁԱՆ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՍԻՐՈՅ Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

Մկրելի Եղբոր իմոյ ճապի Մահտեսի Յովհաննու Մաշդարացոյ Եղիսյեան
որ հանգեաւ ՚ի Տէր, ՚ի հասակի 55 ամաց, ՚ի Կ. Պոլիս Մարտ 3:

Զիք յաշխարհք արարած
Միշտ մնայուն անկասկած .
Փոփոխական են համայնք
Դառնալ ՚ի հող դատապարտք =
Մահկանացու եւ մեք մարդ
Գիտեմք թէպէտ չեմք անմահ ,
Այլ սիրելոյ կանուխ մահ
Առթէ մեզ վիշտ սուգ եւ ցաւ :
Ընդ քոյժ մահուն քո վաղհաս ,
Ո՛վ իմ եղբայր հարազատ ,
Սիրտ իմ ՚ի նետ սուր ցաւոյ
Առ ընկալաւ անքոյժ խոյ :
Կաթուածահար անկեալ քոյ
Եւ զիս արկեր շանթահար .
Այլ ոչ մեռայ զի ընդ քեզ
Կենակցէի մշտապէս :
Լքեր ըզմեզ, եղբայր իմ,
Եղբայր կենաց օրժանի .
Թողեր այրի զամուսին՝
Թողեր զորդիս հայրազերի :
Քո գերդաստան նորաչէն
Գեր դասատուն էր արդէն ,
Ուր մարդկութեան հէգ անդամք
Զարգանային քաջ կրթեալք :

Սուրբ Յակովբեանց պաշտօնեայդ

Պետ կալուածոյ 'ի Բիւզանդ

Իբրու ընդ ամն երեսուն

Հսկեցեր ժիր եւ արթուն :

Արդ զամենայն դու լքեր

Ըստ ցանկութեան հոգւոյ քում

Եւ առ Յիսուս դիմեցեր

Յաշխարհ կենաց անտրտում :

Զարմանալի սէր քո յիս

Բոցակիզէ արդ զաղիս :

Զիք միխիթար իմ սրտիս

Որ վտալից կայ զարդիս :

Զսէր բարեկամք իմ ճգնին

Հարբ , հոգեսուն եղբարք իմ ,

Մատուցանել միխիթար

Թշուառ սրտիս վշտահար :

Զի ապառում սրտիս սուգ

Տայ ինձ զգալ յայնց տաղտուկ

Ինձ քաղցրանայ ողորմուկ

Հեղուլ միշտ դառն արատաւք :

Ի զուր սակայն ողբամ ես

Ըզմահ քո իմն ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հրաւեր առեալ 'ի բարձուստ

Հարեր յաթուր զաշխարհ սուտ :

Թողեր բաժին ամուսնեդ

Եւ որդեկաց սերանունդ

Եւ ինձ եղբորդ եւ այլոց

Ըզմահդ ողբալ սաստկակոծ :

Հանգչի մարմինդ 'ի Տապան

Հանգուցէ Տէր ընդ արդարս

Զողիդ յերկնից 'ի խորան

Յաւերժական անդ 'ի փառս :

Միխիթարիչ Սուրբ Հոգին

Հասցէ եւ մեզ յօգնութիւն

Զանմիխիթարն առ 'ի մէնջ

Բառնալ զսուգ թախծութիւն :

Զապարիս Վ. Եղեայեան

Միաբան Ս. Երոստատէի :